

# ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՅՈԴՈՒԱԾՆԵՐՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ «ԲԱԶՄԱՎԵՊ» ՀԱՆԴԻՍՈՒՄ (1874-1900)

Հայկական մամուլում Յովհաննէս Արքազովսկուն նոտի-  
բուած առաջին հրապարակումներն ի յայտ են եկել գեռ 1840ա-  
րշական թուականներին։ Նկատի ունենք Զմիւռնիայում լոյս տեսնող  
կան «Արշական» շաբաթաթերթում 1841, 1843 եւ 1845  
«Արշական» Արարատեան» շաբաթաթերթում 1841, 1843 եւ 1845

լի մասին։  
Անցան տարիներ, եւ Փարիզում Յովկաննէս Այվազովսկու  
աւագ եղբօր՝ Հ. Գաբրիէլ Այվազովսկու խմբագրութեամբ լոյս  
տեսնող «Մասեաց աղաւնի» երկեղու (Հայերէն եւ Փրանսերէն) հանդէսի 1857 թուականի դեկտեմբերեան ու 1858 թուականի հունիսի նոյեմբերեան համարներում տպագրուեց արդէն միջազգային լայն  
համաշխատ ձեռք բերած գեղանկարչի կեանքն ու արուեստը հա-  
մարէն լեզուով առաջին անգամ մանրամասնօրէն լուսաբանող ան-

<sup>1</sup> Նոյն օրագիրը Յովհաննես Այվազովսկու մասին բաւական հանգամանալից հասորդում է տուել նաեւ 1844 թուականի 196 համարի «Բանասիրական» բաժնում (ԱՐԾԱՂՕՅՍ ԱՐՄԱՏԵԱՆ, Զմիւռնիա 1845, թիւ 235, 16 յունիսի, 1), սակայն Հայաստանի գրադարաններում մեզ չաջող դրւեց գտնել այդ համարը: Ի դեպ, Յովհաննես Այվազովսկու վեճչերս լոյս տեսած կենսամատենագիտութեան կազմողները եւս տեկեակ չեն եղել այդ երապարակման մասին (Թովհաննես Այվազովսկի (Այվազեան). 1817-1900. կենսամատենագիտութիւն, Երևան 2017, 69):

ստորագիր յօդուածը, որն ուղեկցւում էր արուեստագէտի գրա-  
ֆիկական դիմանկարով եւ «Ծովագինեայ սրբարան Ռոդոսում» («Օս-  
մանեան սրբարանը լուսնի լոյսի տակ», 1857) կոչուող նրա իւղան-  
ման կարի վերատպութեամբ<sup>2</sup>: Յօդուածը գրուած էր Յովհաննէս Այ-  
կարի վերատպութեամբ<sup>3</sup>: Յօդուածը գրուած էր Յովհաննէս Այ-  
կարի վազովսկու Փարիզ կատարած հերթական այցի, 1857 թուականի  
փարիզեան ամէնամեայ հանդիսարանում (Salon de Paris) նրա ու-  
նեցած աննախադէպ յաջողութեան՝ Փրանսիացի մեծանուն արո-  
ւեստագէտների ու գրողների՝ արեւելապաշտ գեղանկարիչ, մար-  
տանկարի վարպետ Օրսա Վերնէի, ոռմանտիզմի ներկայացուցիչ,  
ականաւոր բանաստեղծ Ալֆոնս դը Լամարթինի եւ այլոց հետ  
նրա հաստատած բարեկամական կապերի առթիւ: Բայց ըստ  
հութեան՝ յօդուածի անանուն հեղինակն ընթերցողներին ծանօ-  
թացնում է նաեւ Այլազովսկու ստեղծագործական կենսագրու-  
թեան կարեւոր իրադարձութիւններին, համառօտ ներկայացնում  
դակութիւնը: Յօդուածի վերջում թարգմանաբար մէջբերուած  
դակութիւնը: Յօդուածի վերջում թարգմանաբար մէջբերուած  
են Փրանսիական եւ բելգիական մամուլից քաղուած՝ Փարիզի  
վերոյիշեալ հանդիսարանում Այլազովսկու ցուցադրած ծովան-  
կարներին, դաշտանկարներին ու ձմեռային տեսարաններին վե-  
րաբերող կարծիքները:

Երկարատեւ դադարից յետոյ հայկական մամուլում նկարչի  
կեանքին ու ստեղծագործութեանը նույիրուած նոր հրապարա-  
կեանքին ու ստեղծագործութեանը կումբական թուական-  
կումներ եղան, որոնց թիւը կտրուկ աճեց 1870ական թուական-  
ներից ի վեր: Այլազովսկու կենդանութեան օրօք նրա մասին  
ներկայացնումներ եւ իսոհագործութիւններ տպագրեցին ինչպէս արեւելա-  
դուածներ եւ իսոհագործութիւններ տպագրեցին ինչպէս այդ  
հայ, այնպէս էլ արեւմտահայ թերթերն ու հանդէսները, այդ  
մեր ամենաերկարակեաց պարբերականը՝ վենետիկի Մը-  
թուում մեր ամենաերկարակեաց պարբերականը՝

- 
- 2 Յովհաննէս աղա Այլազովսկի, «Մասեաց աղաւնի», 1857, № 12, դեկ-  
տեմբեր, 274-280, 1858 № 11, նոյեմբեր, 254-258:
- 3 Յովհաննէս Այլազովսկու ծննդեան 40ամեայ տարեկարձի կապակցու-  
թեամբ եւ կերպարուեստին մատուցած ծառայութիւնների համար Ֆրան-  
քսիայի կառավարութիւնը նրան պարզեւարել է Պատույ լեգէննի շքա-  
սիամի, իսկ Փարիզի Գեղարվուեստի ակադեմիան՝ ոսկէ մեդալով: Ըստ  
նշանով, իսկ Փարիզի Գեղարվուեստի ակադեմիան՝ ոսկէ մեդալով: Ըստ  
որում, յասուուկ նշուել է, որ հայ արուեստագէտը 1857 թուականի այդ  
ցուցահաննէսի «ոչ միայն զարդն էր, հապա հաեւ տեսլանեկարաց վեհա-  
ցուցահաննէսի պարագաները» (Յովհաննէս աղա Այլազովսկի, «Մասեաց աղաւնի»,  
գոյն նկարիչը) (Յովհաննէս աղա Այլազովսկի, «Մասեաց աղաւնի»,  
1858, № 11, նոյեմբեր, 255):

իսկթարեան միաբանութեան «Բազմավէպ» հանդէսը<sup>4</sup>, որի հիմնադիր-խմբագիրը եւս Հ. Գաբրիէլ Այվազովսկին էր: Հանդէսի է-ջերում այդ տարիներին նկարչի մասին մի շարք կենսագրական յօդուածներ ու տարատեսակ նիւթեր են գետեղուել:

«Յովհաննէս Այվազովսի հայկազն նկարիչ» վերնագրով առաջին յօդուածը լոյս է տեսել 1874 թուականին<sup>5</sup>: Դա Ֆլորենցիայի Գեղարուեստի ակադեմիայում իտալացի անուանի ճարտարապետ Վինչենցոյ Միկելիի՝ 1873 թուականի Մայիսի 1ից մինչեւ Նոյեմբերի 2ը Վիեննայում բացուած Համաշխարհային ցուցահանդէսին վերաբերող երկարաշունչ ճառից հայ ընթերցողներին թարգմանաբար մատուցուած մի հատուած է, որտեղ խօսուում է Վիեննայի աշխարհահանդէսի՝ գեղեցիկ արուեստներին յատկացուած բաժնում Այվազովսկու ցուցադրած, մեծ հետաքրքրութիւն առաջացրած եւ չափազանց բարձր գնահատուած կտաւների մասին: Միկելիի ճառը նախաբանող կարճ ներածականի անանուն հեղինակը հպարտութեամբ նշում է, որ հայ ծովանկարիչն «իր նարտարագործ նկարներով» միջազգային համբաւէի հասաւ եւ «ի պարծան ազգիս» իւր օրինակով ապացուցեց, որ հայերն էլ զուրկ չեն գեղարուեստական հանճարից<sup>6</sup>: Անանուն նոյն հեղինակի կարծիքով Այվազովսկու «գլխաւոր նարտարարութիւնն այն եղաւ՝ որ նրազնին եւ յարատեւակ հետազօտութեամբ գիտցաւ բնութեան գաղտնեաց խորք թափանցել, եւ ի բնութենի հրահանգուելով իրբեւ ի քաջ ուսուցչէ՝ կրցաւ այնպիսի նկարներ ի լոյս ընծայել, մինչեւ գրաւեց գեղարուեստից աշխարհին արդարացի զարմանքը»<sup>7</sup>:

Բայց դառնանք Միկելիի գեղուցմանը: Իտալացի բանախօսը հէնց սկզբից յայտարարում է, որ անցեալի սակաւ եւ ժամանակակից սակաւագոյն նկարիչները միայն կարող են մրցել Այվազովսկու հետ ծովային հանդարտ կամ յուզումնալից տեսարանները, եւ առհասարակ՝ ջրի տարերքը պատկերելու մէջ<sup>8</sup>: Փոխ առ փոխ, հերթով, մանրամասնօրէն նկարագրելով ու բնութագրելով՝ հայ արուեստագէտի ցուցադրած՝ հիմնականում 1872-1873

4 Յովհաննէս Այվազովսկի (Այվազեան). 1817-1900: Կենսամատենագիտութիւն, Երևան 2017, 69-90:

5 Յովհաննէս Այվազովսկի: Հայկազն նկարիչ, «Բազմավէպ», ԼԲ(1874), թիւ 4, էջ 330-334:

6 Անդ, 330:

7 Անդ:

8 Անդ, 333:

թուականներին ստեղծուած ծովանկարները («Սեւ ծով», «Փոքրիկ Սեւ ծովում», «Կ'ապրի», «Ամագլի ծովածոցը», «Խալիայի ծովախորշը», «Ջիբրալթարի Յեղուցը», «Նեապոլի ծովածոցը միգապատ առաւտեան»<sup>9</sup>) եւ ձմեռային տեսարաններից մէկը («Մուկուան ձմրանը: Տեսարան Վորոբէովեան սարերից»)<sup>10</sup>, Միկելին յատուկ մատնանշում է Յովհաննէս Այվազովսկու՝ տարբեր երկների կլիմայական պայմաններին, տարուայ տարբեր եղանակներին ու օրուայ տարբեր ժամերին բնորոշ լուսաօպային մթնոլորտը, լոյսի ցոլացումը, ներդաշնակ գոյների թափանցիկութիւնն ու բարմերանգութիւնը, «հոսանց շարժմունքը, լայն եւ մեծատարած ալեաց երթեւեկը», սպիտակափրփուր ջրերի գոփութիւնը, նոյնիսկ դրանց ճայնն ու տապահամ հոտը ամենայն ճառութեամբ վերարտադրելու «անհամեմատ նարտարութիւնը» եւ ապչեցուցիչ վարպետութիւնը<sup>11</sup>: Աւարտելով իր ճառը՝ Միկելին եղանակացնում է, որ հայ ծովանկարիչը բնութեան հաւատարիմ մեկնաբանն ու պատգամաբերն է, որի ներկայութիւնը կարծես քողարկուում, աներեւութանում է նրա վրձնած կտաւներում: Մակայն, ինչպէս նկատում է բանախոսը, Այվազովսկին նաեւ նրբազգաց բանաստեղծ է, «վասն զի կ'ազդէ ի մեզ գծից եւ գունոց միաբանութեամբ..., վասն զի իր սիրտը շարժած, իր սրտին յատուկ զգացմունքները, նուագարանի մը ճայնին նման... կը հաղորդէ դիտողին»<sup>12</sup>:

Ծովանկարչին նույիրուած յաջորդ հրապարակումը «Բազմավեպ»ում էրեւաց ութ տարի անց՝ 1882 թուականի առաջին համարում<sup>13</sup>: «Յնովհաննէս Այվազովսկի պատկերահան» վերնագիրը կը-ըրոյ յօդուածի հեղինակն էր Ղրիմի Հարասուբազար (այժմ՝ Բելոդորսկ) քաղաքում ծնուած, վենետիկի Միխիթարեան հայրերի մօտ ուսանած, ապա Ղրիմի կաթոլիկ եկեղեցիների (այդ թւում՝ թէո-ուսանած, ապա Ղրիմի կաթոլիկ եկեղեցիների (այդ թւում՝ թէո-

9 Վիեննայի Համաշխարհային ցուցահանդեսից մէկ տարի անց՝ 1874 թուականնէն, Այվազովսկին վրձնել է «Նեապոլի ծովածոցը միգապատ առաւտեան» վերնագրով մեծաչափ (148x214 սմ) եւս մի կտաւ, որն այժմ պահում է Հայաստանի պագային պատկերասահութ: Դատելով ամենից՝ սա վերյիշեալ համանուն ծովանկարի հեղինակային կրկնութիւնն է:

10 Այվազովսկու նոյն նկարների հետ արդէն հասցրել էին ծանօթանալ նի-Այվազովսկու նոյն նկարների հետ արդէն հասցրել էին ծանօթանալ սում, Ֆլորենցիայում եւ Հռոմում մինչ այդ նկարչի բացած անհատական ցուցահանդեսների այցելուները:

11 Յովհաննէս Այվազովսկի. Հայկազն Յկարիչ, նշ. աշխ., էջ 331-333:

12 Անդ, 334:

13 ՔՈՒՇՆԵՑԱՆ Ք., Յովհաննէս Այվազովսկի պատկերահան, Բազմավեպ», Խ(1882), թիւ 1, էջ 38-44:

դոսիայի Սուրբ Գէորգ եկեղեցու) դեկանի պաշտօնը ստանձնած հայագէտ-պատմաբան, Օդեսայի Պատմութեան եւ Հնութիւնների ընկերութեան թղթակից-անդամ, Այլազովսկու մտերիմ բարեկամ Քերովքէ Քուչնէրեանը, որ չուրջ քսան տարի թղթակցել է «Բազմավէլք» ամսագրին:

Յօդուածում մանրամասնօրէն նկարագրուած են 1882ի Յունուարին Թէոդոսիայում կայացած՝ ծովանկարչի հերթական ցուցահանդէսի բացման հանդիսաւոր արարողութիւնը եւ Պետերբուրգ նրա մեկնելու կապակցութեամբ քաղաքի ունեւոր մարդկանց նախաձեռնութեամբ Թէոդոսիայի արական գիմնազիայի<sup>14</sup> մեծ սրահում կազմակերպուած ճաշկերոյթը, որոնց մասնակցել է նաեւ Քերովքէ Քուչնէրեանը: Յօդուածից տեղեկանում ենք, որ ցուցահանդէսի բացումը տեղի է ունեցել Յունուարի 14ին, ուշ երեկոյեան՝ Խտալիա, Կոստանդնուպոլիս եւ Յունաստան Այլազովսկու ձեռնարկած ձմեռային ուղեւորութիւններից անմիջապէս յետոյ, ծովանկարչի նախագծով եւ անձնական միջոցներով 1880ին նրա առանձնաստանը կից կառուցուած, այսօր ծովանկարչի անունը կրող պատկերասրահի դահլիճում<sup>15</sup>: Յայգահանդէսի շքեղ սրահը զարդարուած էր ծաղիկներով եւ ծաղիկինքներով, բազմաճրագ ջահերով, գոյնզգոյն դրօշներով ու դրօշակներով եւ տարատեսակ այլ պաճուճանքներով: Մրահի խորքում, թատերական ներկայացուածների ու համերգների համար նախատեսուած բեմի ներքնապատը ծածկուած էր Վենետիկի ընդհանուր տեսարանը պատկերող, ծովանկարչի ձեռքով կատարուած բնանկարով: Մինչեւ առաւոտեան ժամը 5ը տեւած բազմամարդ խնջոյքի ընթացքում ներկաները հնարաւորութիւն ունէին նաեւ մասնակցելու զինուորական նուագախմբի երաժշտութեամբ ուղեկցուող պարահանդէսին ու լսելու

14 Յովհաննես Այլազովսկին ակտիւ մասնակցութիւն է ունեցել այդ գիմնազիայի՝ 1873ին իր դոները բացած նոր շենքի կառուցման գործում: Աւելին՝ դարձել է դասական սոյն կրտարանի պատուաւոր խնամակալը:

15 Թէոդոսիայի պատկերասրահը Ռուսաստանում հանրային հանրամատչելի երրորդ գեղարուեստական բանգարանն էր՝ Սանկտ Պետերբուրգի էրմիտաժից եւ Մոսկվայի Ռուսեանցեւեան բանգարանից յետոյ: Նկատենք նաև, որ մինչ այդ Ռուսական կայսրութեան տարածքում որեւէ նկարիչ սեփական բանգարան կամ անհատական պատկերասրահ չի ունեցել: Նոյնիսկ արուեստի այնպիսի խոշոր գանձարանները, ինչպիսի են Մոսկվայի Տրետեակոլեսան պատկերասրահը կամ Սանկտ Պետերբուրգի Ռուսական բանգարանը, ժողովրդական լայն խաւերի համար մատչելի են դարձել միայն 1890ական բուականներին:

օրիորդներ Այնա Նալբանդեանի եւ Կատարինէ Միրզայեանի դաշ-նամուռախն գեղեցիկ կատարումները:

Դրանից տաս օր անց՝ Յունուարի 24ին կայցած հրամեց Դրանից մաշն ներկայ էին թէոդոսիայի շուրջ 50 «զանազան ազգաց» աշխատառը քաղաքացիներ՝ բարձրաստիճան զինուորականներ, ստիկաններ, դատաւորներ, եկեղեցական գործիչներ, դպրանոցի եւ արական գիմնազիայի տեսուչներ՝ քաղաքապետ Վլադիմիր Ալ-առաջական գլխաւորութեամբ, ով առաջինը բաժակ բարձրացրեց տուխովի գլխաւորութեամբ, ով առաջինը բաժակ բարձրացրեց եւ մեծարանքի խօսքեր յլեց 1880 թուականին թէոդոսիայի պատուառը քաղաքացի ընտրուած համբաւառը նկարչին: Սրահում երաժշտութիւն էր հնչում, իսկ պատից «կախուած կը փայլէր» ռուս նկարիչ Իւան Կրամսկովի՝ հայ ծովանկարչին պատկերող, դափնեապակ ճոխ յրջանակի մէջ դրուած յայտնի դիմանկարը:

16 ՔՈՒՇՆԱՐԵԱՆ Ք., Յովհաննէս Այլպազուսի պատկերահան, «Քաղմակէպ»,

Խ(1882), թիւ 1, էջ 43:

17 ՔՈՒՇՆԵՐՆԵՍՆ Ք., «Թէղոսիդի Առաջէնի ջրմուղին բացառ ապրու», վ. 1889, Խելացի, 1 համար, էջ 43-47, պիլ 4, էջ 113-116, պիլ 5, էջ 181-182.

185.

185.

19 Ասի, Է 43:

շատակարաններ ու մակագրութիւններ: Սակայն ոչ այդ վերջինները, ոչ էլ ժամանակին Կաֆայում ճենովացինների կառուցած արհեստական ջրաշեղջերը, ջրմուղները եւ աղբիւրները, որոնք ժթ. դարում եւս շարունակում էին թէոդոսիային ըմպելի ջոկր մատակարարել, այլևս ի վիճակի չէին բաւարարելու քաղաքի օրէցօր աճող բնակչութեան բնական պահանջները: Եւ ինչպէս նկատում է Քերովքէ Քուշնէրեանը՝ «երէ մեր օրեր գերահոչակ նկարչապետն Յովիաննէն Այլազեան շնորհէր գրի 50.000 չափ կամ դրայ համեմ շուր անջրդին Թէոդոսիոյ, շատ վատ եւ տակաւ անտանելի պիտի կիմեր քաղաքին բնակչաց վիճակը»<sup>20</sup>: Այլազովսկուն եւ Աննա Բուրնազեանին պատկանող, թէոդոսիայից 26 վերսա հեռաւորութեան վրայ գլունուոր Սուրաջ գիւղակի ինքնարուխ լճից թուջէ խողովակներով թէոդոսիա բերուած անապակ ջուրը 1888 թուականի սեպտեմբերի 18ին «արկու ձիւնեղին սիւներու ձեւով... վերջապէս ցայտոց մեծ քանակութեամբ... քաղաքի փոշուտեալ հրապարակաց վերայ»<sup>21</sup>:

Այլազովսկու նախագծով եւ նրա ծախսերով տեղական ծովագրից կառուցուած՝ բաւական մեծաչափ, ճարտարապետական իւրակերպ տեսք ստացած այդ ցայտադրիւրի հանդիսաւոր բացումը տեղի ունեցաւ նոյն թուականի Հոկտեմբերի 1ին: Դրանից մի քանի օր առաջ Ռուսաստանի կայսր Ալեքսանդր Գ.ի հրամանագրով այն պաշտօնապէս կոչուեց հայ ծովանկարչի անունով: Զրմուղի եւ աղբիւրի բացման առիթով քաղաքի հանրային պարտէցում տօնական մարդաշատ ճաշկերոյթ կազմակերպուեց, որի ընթացքում Այլազովսկուն ուղղուած բազմաթիւ կենացներ ասուեցին:

Քերովքէ Քուշնէրեանի յօդուածաշարը եզրափակող երրորդ բաժնում ամբողջութեամբ ներկայացուած է Հայ Առաքելական Եկեղեցու վանքերից մէկի՝ Ղրիմի Սուրբ Խաչ վանքի վանահայր, Յովհաննէս Այլազովսկու արուեստոի գիտակ Խորէն Ծ. Վրլ. Ստեփանիկ՝ ոռուսէրէն արտասանուած եւ ապա բանախօսի կողմից հայրէն թարգմանուած մեծարման ճառը<sup>22</sup>: Հէնց սկզբից նշելով, որ

20 Անդ:

21 Անդ, 45 եւ 114-115:

22 Անդ, 181-184: Ինչպէս վկայում է Յովիաննէն Այլազովսկու կենսագիրներից՝ արուեստարան Մինաս Սարգսեանը, Խորէն Ստեփանէն ոչ միայն լաւ գիտէր ծովանկարչի արուեստը, այլև պատրաստում էր նրա կեանքին ու ստեղծագործութեամբ նուիրուած մեմագրութիւն գրել, բայց նրա այդ մտադրութիւնն ինչ-ինչ պատճառներով չի իրագործուել (տե՛ս ՍՍ.Ր.

**Թէղոսիայի համար նոր ջրմուղ կառուցած ծովանկարիչն «այնպիսի սէր ցոյց տուեց առ իւր հայրենի քաղաքը, որ միայն սա կարող էր անմահացնել նորան»<sup>23</sup>, ապա խօսելով ջրի ոչ միայն կենցաղային անհրաժեշտութեան, այլև հոգեւոր իմաստի, եկեղեցական խորհրդի ու կրօնական նշանակութեան մասին, ծայրագոյն վարդապետը վերջում շէշտում է. «Որքան մեծ պատիւ է Թէղոսիայի համար, նոյնիան մեծ պատիւ է հայ ազգի համար ծնել Յովիաննես Այվազովսկուն... Մնեմ՝ հայերս, արդարեւ կատարեալ իրաւում ունին մեզ պարծաճի համարել Յովիաննես Այվազովսկուն՝ իրեւ հային, որին իորին կերպով յարգում եւ գնահատում է հայկական ազգը»<sup>24</sup>:**

Ամփոփելով իր յօդուածաշարը՝ Քերովբէ Քուշնէրեանն ընթերցողներին մի հետաքրքիր եւ, ինչպէս կը տեսնենք, առեղծուածյին տեղեկութիւն է հաղորդում. Պարզւում է, որ հանդիսութեան աւարտին «մի Թէղոսիայի ազգային» հայերէն լեզուով նկարչապետին նուիրուած բանաստեղծութիւն է կարդացել<sup>25</sup>: Քուշնէրեանը չի նշում ոչ տուեալ անձնաւորութեան անոնը, ոչ էլ ոտանասորի վերնագիրը, բայց ընթերցողներին յուշում է, որ այդ բանաստեղծութիւնը նրանք կը գտնեն «Բազմավէպ»ի յաջորդ համարում: Եւ իսկապէս՝ ամսաթերթի նոյն թուականի յուլիսեան պրակում տպագրուում է «Հանդէս բացման ջրմուղին Թէղոսիայի եւ աղբիւրին Այվազեան առ նկարչապետ Յովիաննես Այվազեան երգ երկարաշունչ վերտառութեամբ ու բաւական ընդարձակ՝ յանգաւոր 12 տներից բաղկացած ոտանաւորը»<sup>26</sup>.

ԳԵՍԱՆ, Մ., Յովիաննես Այվազովսկի, Երեւան 1976, 270): Նկատենք նաև, որ իր կեանքի վերջում՝ 1899 բուականին, Յովիաննես Այվազովսկին ստեղծել է Տ. Խորեն եաւ Ստեփանեկի դիմանկարը, որն այսօր գտնվում է Թէղոսիայի Խ. Կ. Այվազովսկու անուան պատկերասրահում:

23 ՔՈՒՇՆԷՐԵԱՆ Ք., Թէղոսիոյ նորաշէն ջրմուղին բացման առքիւ, Փամաւլէպ, Խէ(1889), թիւ 6, էջ 182:

24 Անդ, 184:

25 Անդ, 185:

26 «Բազմավէպ», Խէ(1889), թիւ 7, էջ 215: Յովիաննես Այվազովսկուն նուիրուած իր վերջին աշխատութեան մէջ արուեստարան Սինաս Սարգսեանին, հատուածարար եւ որոշ անհշոտութիւններով մէջբերելով այդ բանաստեղծութիւնը, նշում է, որ շուտով այն երգի է վերածուել ու դեռ երկար ժամանակ լուսել Թէղոսիայի հայ բնակչիների շուքքերից (ՍԱՐԴ-ՍԵԱՆ, Մ., Մէծ ծովանկարչի կեանքի, Երեւան 1990, 323-324): Հայ գրականութեան մէջ սա Յովիաննես Այվազովսկուն նուիրուած երկրորդ բանաստեղծութիւնն էր՝ 1885 բուականին դերասան Պետրոս Ադամեանի հեղի-

Հետաքրքիրն ու միաժամանակ տարօրինակն այն է, որ այստեղ եւս բացակայում է Քերովքէ Քուշնէրեանին տպագրութեան համար բանաստեղծութեան բնագիրը տրամադրած հեղինակի անունը: Սակայն ամէն ինչ կը պարզաբանուի ու տեղը կ'ընկնի, եթէ ենթադրենք, որ ոտանաւորի հեղինակը ոչ այլ ոք է, եթէ ոչ համեստաբար սեփական անունը «Քուշարկած» Քերովքէ Քուշնէրեանը, ով ոչ միայն յայտնի հոգեւոր գործիչ ու հայագէտ-պատմաբան էր, այլև բանաստեղծական արուեստին վարժ տիրապետող, հմուտ թարգմանիչ, որ ոռւսերէնից հայերէն է թարգմանել Ալեքսանդր Պուշկինի, Միխայիլ Լերմոնտովի, Տարաս Շենչենկոյի եւ այլոց չափածոյ երկերը եւ ինքն էլ բանաստեղծութիւններ է գրել<sup>27</sup>:

Անկած «Առ Այլագովամիք» բանաստեղծութիւնից յետոյ (Ա.Դ.ԱՄԵՆԱՆ, Պ., Երկեր, Երեւան 1956, 217-219): Ծովանկարչն մեծարող միւս գրուածքները՝ Յովհաննես Թումանեանի «Այլագովամիք ծովանկարի առաջ» («Մուրճ», Թիֆլիս 1893, № 9, սեպտեմբեր), 1348) և «Մի հառաջամբ» (Այլագովամիքու «Մեւ ծովի ափերը» կապրի առջեւ») («Հորիզոն» գրականական հանդես, Թիֆլիս 1894, գիրք առաջին, 99) հաերայաց բանաստեղծութիւնները, ինչպէս նաև Ալեքսանդր Շատուրեանի «Ծովի կախարդ» (Այլագովամիք յիշատակիթ)» արձակ բանաստեղծութիւնը («Մշակ», Թիֆլիս 1900, № 79, մայիսի 2, 1) և Տիրամ Զրաբեանի (Խնտրա) «Մեւ Ծով, Այլագովամիք, Ասուած» ոգեշունչ խոհագրութիւնը (ԶՐԱ.Ք.ԲՆԱՆ, Տ., Երկեր, Երեւան 1981, 243-246) գրուել են Ինչ աւելի ու՝ 1893-ից մինեւ 1900 բուլականները: Վերջերս ՀՀ ԳԱԱ Արուեստի փոխտնօրին, արուեստագիտութեան դրվագոր-պրոֆեսոր, երաժշտագէտ Աննա Ասարեանը քացայաց տեղ է, որ ուսու կոմպոզիտոր, «Հզօր իլրմանկի» անդամ Ենգար Կիւիի «Պամատ Ի. Կ. Անվազօվսկոց» ձայնի եւ դաշնամուրի համար 1902 քուականին գրուած ոեկվինմիթ բանաստեղծական տեխնիկ հետինակը երաժշտագէտ, երաժշտական-հասարակական գործիչ, երապարական Կասիի Կորգանովն էր, նոյն ինքը բարսել Ղորդանեանը (ԱՍԱ.Տ.ԲՆԱՆ, Ա., Յովհաննես Այլագովամիքին եւ հայ երաժշտութիւնը ի Յովհաննես Այլագովամիք – 200: Գիրական մստաշրջամիք միւրեք (3 նոյնմերի, 2017), Երեւան 2018, 159): Վեցուղեայ այդ գողորիկ բանաստեղծութիւնը («Կисть вдохновенная упала...») որպաս բնարան հրատարակուել է Թիֆլիսում լոյս տեսնող «Կավազսկий вестник» գիտական-գեղարվունասուական ամսագրի համար ծովանկարչի մահուան առիբուլ Վ. Կորգանովի գըրած յօդուածի սկզբում (КОРГАНОВ, В., Իվան Константинович Аնվազօվսկий, «Кавказский вестник», Тифлис 1900, № 5, май, 124):

27 Մեր ենթադրութիւնը մասնակիօրէն հաստատում է նաև հետեւեալ հանգամանքը. Քերովքէ Քուշնէրեանը հայ ծովանկարչի մասին վերջինիս կենդանութեան օրօք գրած այն բացառիկ հեղինակներից է, ով արուեստագէտի ազգանուան՝ այդ ժամանակ ամէնուրել ընդունուած ուսասկան

**Անցաւ մէկ տարի,** եւ «Բազմավեպ»ի մայիսեան համարում հրապարակուեց «Նկարչապետ Այվազովսիի պատկերահանդէսն ի Փարիզ» անստորագիր յօդուածը<sup>28</sup>, որի հեղինակը տողատակում տեղեկացնում է, որ հոչակաւոր ծովանկարչի հետ նրան ծանօթացրել է նոյն Քերովք Քուշնէրեանը՝ Փարիզում 1889 թուականի մայիսին մեկնարկած Համաշխարհային ցուցահանդէսի ժամանակ<sup>29</sup>: Յօդուածում հանգամանօրէն լուսաբանուում է Քրանսիացի անուանի նկարահաւաք եւ մեկնաս Պոլ Դիրան-Ռիւելի փարիզեան նշանաւոր պատկերասրահում 1890 թուականի Ապրիլի 1ին հանդիսաւորութեամբ բացուած եւ մինչեւ Մայիսի 15ը տեւած՝ Ցովհաննէս Այվազովսկու անհատական ցուցահանդէսը, որտեղ ներկայացուած էին Հիմնականում 1887-1889 թուականներին Ատլանտիսան ովկիանոսի, Միջերկրական ծովի եւ Սեւ ծովի մերձակայ տարբեր վայրերում կարպետի վրձնած շուրջ երեք տասնեակ ստեղծագործութիւններ՝ ծովային ու ծովափնեայ 26 տեսարան («Ալիք: Վերջին պահն ովկիանոսում»<sup>30</sup>, «Մայրամուտ: Խապանիայի ափերը», «Բիարիցի ծովափը գիշերով», «Մարմարայ ծովը եւ նօր Ս.Չարարակաց դրեակը», «Կանենի մերձակայքը», «Ալեկոծուած Սեւ ծովը» եւ այլն), ձմեռային մէկ բնանկար («Սուլք Խահակ Մայր եկեղեցին Պետերբուրգում: Սառնամանիք օր») եւ այսօր Հայաստանի ազգային պատկերասրահում ցուցադրուող «Զրիեղեղից յետոյ, Արարատի մօս» («Նոյն իշնում է Արարատից») յայտնի կտաւը:

**Յօդուածում վերջին նկարին վերաբերող, հայերիս համար յատկապէս հետաքրքիր մի գրուագ է բերուած: Հանդէսի բացման նախընթաց օրը, ցուցադրութեան հետ կապուած վերջին հրա-**

ձեւը (Այվազովսկի) մշտապէս հայացրել, փոխարինել է հայկական ձեւով (Այվազիան): Եւ պատահարա՞ր է արդեօֆ այդպէս վարուել նաև «Բագմավեպում զետեղուած ուստանուած անտառուն հեղինակը:

28 Նկարչապետ Այվազովսիի պատկերահանդէսն ի Փարիզ, Բազմավեպ, ԽԸ (1890), թիւ 5, 175-178:

29 Անդ, 176:

30 1889ին աւարտուած, այժմ Սանկտ Պետերբուրգի Ռուսական բանգարանին պատկանող, աւելի քան եկանք մետք երկարութիւն ու երեք մետք բարձրութիւն ունեցող այս կտաւը Յովհաննէս Այվազովսկու երբեւէ ստեղծած ամենախոշոր նկարն է: 1890 թուականի փետրուարի 22ին ուսւ անուանի լրագրող, հրատարակիչ, քատերագէտ ու բաներագիր Ալեքսէյ Սուվորին ին ուղղուած նամակում արուստագէտը խոստովանում է, որ այդ կտաւն իր «լաւագոյն փորարիկն է» (տե՛ս Այվազովսկու Դոկումենտներ և մատերիալներ, Երևան 1967, 253):

Հանգները պատկերասրահի աշխատողներին տալուց յետոյ, ծովանկարիչը մօտեցել է յօդուածագրին եւ ասել. «Անշուշտ, հայկական նիւթ մի կը փառուես իմ նկարուց մէջ», ասա նրան յարակից սրահ տանելով՝ հեռուից ցոյց է տուել այդ մեծադիր կտան ու բացականչել. «Ահա՞ մեր Հայաստանը»<sup>31</sup>:

Ցուցահանդէսի բացման առաջին օրը՝ Ապրիլի 1ին, Դիւրան-Ռիւզէլի ուղեկցութեամբ պատկերասրահ այցելեց Ֆրանսիայում՝ Իուսասատանի դեսպան Արթուր Մորէնդէյմը, իսկ յաջորդ օրը նկարահանդէսն իր ներկայութեամբ յարգեց Ֆրանսիայի նրանու կողմէ հանրապետութեան նախագահ Մարի-Ֆրանսուա Կարնոն, ով նկարները դիմելուց եւ ֆրանսերէնին վարժ տիրապետող ծովանկարչի բացատրութիւնները լսելուց յետոյ նրան ջերմօրէն չնորհաւորեց ու չնորհակալութիւն յայտնեց:

Ցուցահանդէսի վերջում բերուած է ցուցահանդէսի կատալոգում ընդգրկուած եւ համարակալուած ստեղծագործութիւնների ամբողջական ցանկը<sup>32</sup>:

«Բազմավէպ»ի 1898 թուականի յունուարեան համարում Ցովհաննէս Այվազովսկու ծննդեան 80ամեակի առթիւ տպագրուեց Միխթարեան միաբանութեան անդամ, բանասէր եւ ազգագրագէտ Վարդան Հացունու «Այվազեան Յովհաննէս ծովանկարիչ» խորագրով յօդուածը<sup>33</sup>, որտեղ բերուած է նկարակալի առջեւ ա-

31 Նկարչապետ Այվազովսկիի պատկերահանդէսն ի Փարիզ, «Բազմավէպ», ԽԸ(1890), թիւ 5, էջ 176:

32 Անդ, 178: Յովհաննէս Այվազովսկուն նուիրուած իր վերջին մենագրութեան մէջ անդրադանեալով ծովանկարչի փարիզեան այդ ցուցահանդէսին՝ արուեստարան Մինաս Սարգսեանը բոյլ է տուել փաստական մի շարք սխալներ, որոնք վերաբերում են ցուցադրուած նկարների բուաքանակին, ինչպէս նաև ցուցահանդէսի բացման եւ փակման ամսաբուքին: Բացի այդ, նա Ֆրանսիայի Հանրապետուրեան այն ժամանակուայ գործող նախագահ Մարի-Ֆրանսուա Կարնոնին շփոքել է դրանից տասնեւակ տարիներ առաջ երկրի իշխանութիւնը ստանձնեած ու դեռ 1873ին կեամբից հեռացած Ֆրանսիայի առաջին նախագահ նարուես Գ.ի՝ Շառլ Լուի Նարուես Պոնարարտի հետ, որն իրը Դիւրան-Ռիւզէլի պատկերասրահ է ժամանել «ցուցահանդէսի վերջին օրերին» (ՍԱՐԴ-ՍԵՍՆ, Մ., Մեծ ծովանկարչի կեամբը, Երեւան 1990, 336-337): Հետեւարաք՝ մնաւմ է եղանակացնել, որ Մ. Սարգսւանը ժամօր չի եղել «Բազմավէպ»ի այս ամսադրագիր յօդուածին:

33 ՀԱ.8ՈՒՆԻ, Հ. Վ., Այվազեան Յովհաննէս ծովանկարիչ, «Բազմավէպ», ՄԶ (1898), թիւ 1, էջ 17-22:

թոռին նստած, գունապնակով ու վրձնով զինուած ծովանկարչի 1893 թուականին Թէոդոսիայում արուած լուսանկարը<sup>34</sup>: Արձանագրելով, որ Յովհաննէս Այվազովսկին «գեղարուեստի մէջ եւ նկարչական բովանդակ աշխարհում հայ հանճարյն մեծութիւնն ու վեհութիւնն է»<sup>35</sup>, Հացունին չի բաւարարւում այսքանով եւ է՛լ աւելի փառաբանելով նկարչին՝ նրան անուանում է Տէր Աստծուց յետոյ «ջրոց երկրորդ արարիչը»<sup>36</sup>:

Յօդուածի հեղինակը հայ ընթերցողներին համառօտակի ծանօթացնում է Յովհաննէս Այվազովսկու արուեստի մասին ոռու եւ Փրանսիացի արուեստագէտների, մասնաւորապէս՝ Օրաս Վերնէի գովասանական կարծիքների հետ<sup>37</sup>, ապա նկարագրում սեփական աչքով երբեւ տեսած ու իր յիշողութեան մէջ կառ տպաւորուած՝ տարբեր ժանրերում ծովանկարչի վրձնած հանրայաց կը-տաւները՝ Վենետիկի Միջիթարեան միաբանութեան թանգարանում պահուող «Քառու: Աշխարհի արարումը» (1841), «Նևապարի փարոսը» (1842), «Նաւարեկուրիւն Հիւսիսային ծովում» (1875) եւ «Արարատ սարը» (1885), ինչպէս նաեւ Ֆլորենցիայի Պիտուի պատկերարահում ցուցադրուող «Խնձնանկարը» (1874) եւ այլն:

Յօդուածի վերջում Հացունին հաստուածաբար մէջբերում է 1897 թուականի սեպտեմբերի 26ին եւ 27ին Թէոդոսիայի քաղաքակետարանի դահլիճում կայացած՝ Յովհաննէս Այվազովսկու 80ամեակին ու նրա ստեղծագործական գործունէութեան 60ամեակին նուիրուած պաշտօնական տօնակատարութեան եւ դրան յաջորդած հանդիսաւոր այլ միջոցառումների մասնակից, բանագնաց պատգամաւոր, Վենետիկի Միջիթարեան միաբանութեան անունից ծովանկարչին հասցէագրուած շնորհաւորական հեռագիրն ընթերցած, ապա «մի փոքր ոտանաւոր» կարդացած Հ. Համազասպ Սափարեանի հաշուետու գրութիւնը<sup>38</sup>: Սափարեանի նա-

34 Անդ, էջ 18:

35 Անդ, էջ 17:

36 Անդ, էջ 18:

37 Տեսելով Յովհաննէս Այվազովսկու ծովանկարներն ու մարտանկարները՝ Օրաս Վերնէն դրամի համեմատել է Փրանսիացի անուանի մարիմեաս եւ մարտանկարի Թէոդոր Գիւդէնի նմանատիպ կտաների հետ ու գոնել, որ վերջիններս ակեցյալորեն զիշում են հայ արուեստագէտի աշխատանքներին (ՀԱՅԻՆԻՆԻ, Վ., Այվազով Յովհաննէս ծովանկարիչ // Բագմավէպ, Վենետիկի, 1898, հատոր ՄԶ, յունուար, 19):

38 ՀԱՅՈՒՆԻՆԻ, Վ., Այվազով Յովհաննէս ծովանկարիչ // Բագմավէպ, Վենետիկի, 1898, հատոր ՄԶ, յունուար, 21-22: Մինաս Սարգսեանի վերոյիշեալ

մակից տեղեկանում ենք, որ հանդէսին ներկայ էին Տաւրիայի նահանգապետ Պետր Լազարեւը եւ Թէոդոսիայի քաղաքային ժողովի բոլոր անդամները՝ քաղաքապետ Լէոնարդ Դուրանտէի գլխաւորութեամբ։ Բացերով հանդիսաւոր նիստը՝ վերջինս կարդացել է Ռուսաստանի կայսր Նիկոլայ Բ.-ի՝ ծովանկարչին ուղղուած շնորհաւորական հեռագիրը, որին կցուած էր ինքնակալ միապետի հրամանագիրը Յովհաննէս Ավազզովսկուն կայսրութեան բարձրագոյն պարգեւներից մէկին՝ Սուրբ Ալեքսանդր Նեւակուու առամանդակուու շքանշանին արժանացնելու մասին։ Ապա Դուրանտէին հրապարակել է քաղաքապետարանի կայացրած՝ Թէոդոսիայում նախակրթական վարժատուն բացելու եւ այն աշխարհահռչակ ծովանկարչի անունով կոչելու որոշումը։ Դրան հետեւ ել են նահանգապետի, կայսերական Գեղարուեստի ակադեմիայի, Լուսաւորութեան նախարարութեան, Ծովային նախարարութեան, Եալթայի քաղաքային ժողովի, Ռուս նկարչիների հարաւային ընկերութեան, Պետերբուրգի հայ հասարակութեան, Թէոդոսիայի հայ ծխականների լիազօր ներկայացուցիչների ողջոյնի խօսքելու ու շնորհաւորական ուղերձները, որոնք ընդմիջուել են յոթելեարին թանկարժէք նուէրների մատուցման արարողութեամբ։ Նոյն օրը նոյն դահլիճում կազմակերպւած հանդիսաւոր բազմամարդ ճաշկերոյթի ժամանակ նահանգապետ Պետր Լազարեւի, քաղաքագլուխ Լէոնարդ Դուրանտէի գլխաւոր Ֆրանսիական հիւպատոսի արտասանած կենաց ճառերից յետոյ ընթերցուել են

---

աշխատութեան մէջ յորելեանական այդ տօնախմբութեամբ «Աղամանիեայ յորելեան» վերտառութեամբ մի փոքրիկ գլուխ է յատկացուած (ՄԱՐԴԲ-ՍԵԱՆ, Մ., Մեծ ծովանկարչի կեամբը, Երեւան 1990, 393-396), որտեղ, ինչպէս եւ Յովհաննես Այվազովսկու՝ 1890-ին Փարիզում բացուած անհատական ցուցահանդեսի մասին պատմող գլխում, փաստացի սփաթներ ու անհշտութիւններ կան։ Այսպէս՝ գրուած է, որ յորելեարի մեծարման հանդիսաւոր նիստը տեղի է ունեցել ոչ քէ Քաղաքապետարանի դահլիճում, այլ ծովանկարչի առանձնատանը կից պատկերասրահում, իսկ Վենետիկի Միջբարեան միաբանութեան անունից ելայթ են ունեցել ու ողոյնի խօսք ասել Վարդան Հացուեին եւ ուն Ս. Սարինեանը (Յշ. աշխ., 395)։ Ինչպէս տեսանել, Հացուեին ծովանկարչի յորելեանական հանդեսին չի մասնակցել եւ այդ օրերին Ս. Ղազար կղզուց չի բացակայել։ Ինչ վերաբերում է մեզ անցայու Ս. Սարինեանին, ապս յարգարժան արուեստարանը վերջինիս պարզապէս շփորել է Համազասպ Սահարեանի հետ։ Այստեղից երեսում է, որ «Բազմապէպում» տպագրուած Հացուեն այս յօդուածը եւս վրիպել է Յովհաննես Այվազովսկու կենսագրի ուշադրութիւնից։

Ամենայն հայոց կաթողիկոսից, կայսերական ընտանիքից ու նախարարներից ստացուած հեռագրերը:

Վարդան Հացունու յօդուածը Յովհաննէս Այվազովսկու մասին ծովանկարչի կենդանութեան օրոք «Բագմավեպում» գետեղուած վերջին հրապարակումն էր: Դրանից երկու տարի անց՝ 1900 թուականի Ապրիլի 19ին (նոր տոմարով՝ Մայիսի 2ին) հանճարեղ արուեստագիտը հեռացաւ կեանքից: Այդ տիսուր լուրը արձագանք գտաւ ինչպէս ուղարկան ու եւրոպական, այնպէս էլ հայկական մամուլում: Իր մեծահամբաւ հայրենակցի յիշատակը յարգեց նաեւ «Բագմավեպ»ը: Ամսագրի՝ նոյն թուականի յուլիսեան պրակում տեղ գտաւ Յովհաննէս Այվազովսկու մահախօսականը, որի հեղինակն էր Վենետիկի Միջիթարեան միաբանութեան անդամ, այն ժամանակ դեռ տակաւին երիտասարդ բանասէր, վանական ճեմարանի հայոց լեզուի, գրականութեան եւ պատմութեան դասատու, յետագյուռ «Բագմավեպ»ի խմբագիր, ապա միաբանութեան աբբահայր Յովհաննէս (Յովհան) Աւգերենեանը<sup>39</sup>:

Խորին կակիծով արձանագրելով, որ «հայ հորիզոնի ամենապայծած աստղաց մէկի»՝ Յովհաննէս Այվազովսկու վախճանից յետոյ «գեղեցկագիտական բովանդակ աշխարհը մեծ կորուս կրեց», եւ որ նկարիչը նոր ժամանակների առաջին հայ հանճարն էր, ում յաջողուեց «պասկ մը կորզել կոյր բաղդի ձեռքէն»<sup>40</sup>, մահախօսականի հեղինակը գրուատանքի խօսքեր է ասում նաեւ փառապանծ վարպետի մարդասիրութեան, բարերարական ու հայանպաստ անշահախնդիր գործունեութեան մասին, եւ վերջում կրկին խոնարհում նրա յիշատակի առաջ<sup>41</sup>:

Յետագյուռ եւս «Բագմավեպ»ը մի քանի անգամ անդրադարձել է Յովհաննէս Այվազովսկու կեանքին ու նրա ստեղծագործութեանը: Նկատի ունենք Միջիթարեան միաբանութեան անդամ, հանդէսի նախկին խմբագիր Հ. Ղեւոնդ Տայեանի «Սուրբ Ղազարու Միջիթարեան Դիւանը ծովանկարիչ Յ. Այվազովսկիի յաղթանակներու մասին», արուեստաբան Գարեգին Քոթանջեանի «Իտալիան եւ Այվազովսկու արուեստը» եւ Փրանսահայ պատմաբան

39 Ա.ԻԳԴՐԵԱՆ, 8., Յովհեամեթս Այվազովսկի, «Բագմավեպ», ՆԸ(1900), թիւ 7, էջ 334-335:

40 Ա.Անդ, էջ 334:

41 Ա.Անդ, էջ 335:

**Անահիտ Տէր-Մինասեանի** «Այլազովսկի (1817-1900) հայ նկարիչ մը ոռուսական Մեծ դարուն մեջ» մեզ ծանօթ յօդուածները<sup>42</sup>, որոնք ստիպուած պէտք է շրջանցենք, քանզի մեր գեկուցումը վերաբերում է միայն ԺԹ. դարի ընթացքում՝ ծովանկարչի կենդանութեան օրոք լոյս տեսած ու նրա մահուանն անմիջապէս արձագանքած հրապարակումներին:

### ԱՐԱՐԱՏ ԱՂԱՍԵԱՆ

---

42 ՏԱ.ՑԵՍ.Ն., Հ.Դ., Սուրբ Ղազարու Միհրաբեան Դիւանը ծովանկարիչ Յ. Այլազովսկիի յաղթանակներու մասին, «Բազմավէպ», ՂԵ (1937), թիւ 12, էջ 305-316; ՔՈԹԱՆՁԵԱՆ, Գ., Խոալիան եւ Այլազովսկու արտեստը, «Բագմավէպ» ՃԿԵ (2007), թիւ 1-4, 538-555 (այս յօդուածը վրիպել է Յովհաննես Այլազովսկու «Կենսամատենագիտութեան» կազմողների ուշադրութիւնից): TER MINASSIAN, A., *Aïvazovski (1817-1900) un peintre arménien dans Grands siècles russes*, «Բազմավէպ», ՃԿԵ (2009), թիւ 1-4, 485-516 (այս յօդուածը եւս չի արտացոլուել ծովանկարչի «Կենսամատենագիտութեան» էջերում):

### **Summary**

## **ARTICLES AND PUBLICATIONS ABOUT IVAN (HOVHANNES) AIVAZOVSKY IN THE JOURNAL “BAZMAVEP” (1874-1900)**

**ARARAT AGHASYAN**

In Armenian periodical press the first publications about Ivan Aivazovsky appeared as far back as the 40s of the XIX century. During the great marine painter's lifetime a large number (around 150) of short reports and large-scale articles about the painter were published in Armenian newspapers and journals. Among those publications was “Bazmavep” – the official journal of the Congregation of Armenian monks-Mekhitarists in Venice, which has been issued since 1843, the founder and first editor of which was the elder brother of the celebrated painter – Gabriel Aivazovsky. In those years a whole series of materials about the great master was put in the periodical, the authors of which were Italian architect Vincenzo Michelli, the native of Crimean town Karasubazar (now – Belogorsk), the dean of catholic churches of Crimea, historian-armenologist Kerovbe Kushnerian, the member of Mekhitarist Congregation of Venice, philologist and ethnographer Vardan Hatsuni, the editor of “Bazmavep”, the spiritual leader of the Congregation abbot Hovhan Aucherian and others.